ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք , գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 02

« 16 » Հունվարի 2019թ .

06-030-0009-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ , ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ , հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության / օգտագործման / իրավունքի գրանցման թիվ 1590721 վկայականը և Արշալույս Գիքինյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Ա. Գիքինյանին սեփականության իրավունքով պատկանող Գոգարան համայնքի 4-րդ փողոց, 1-ին նրբանցքի վրա գտնվող 06-030-0009-0004 կադաստրային ծածկագրով 0.12 հա մակերեսով տնամերձ հողամասին , դրա վրա գտնվող 06-030-0009-0004-001 կադաստրային ծածկագրով 243.4 քառ. մ մակերեսով տանը տրամադրել « գ. Գոգարան ,4-րդ փողոց , 1-ին նրբ. թիվ 1 » հասցեն :

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարանի համայնքապետարան, գ. Գոգարան
հեռ. 0255 6 06 04

ՈՐՈՇՈՒՄ

« 21 » Հունվարի 2019 թվականի N 03

ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և առաջնորդվելով Գոգարան համայնքի 2019 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխման փոփոխություններ կատարելու մասին ավագանու 21.01.2019 թվականի թիվ 01-Ն որոշմամբ՝

Որոշում եմ.

Հաստատել 2019 թվականի փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ